ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՍԱՆՈՂ ՋԱՎԱԽԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՋԽՄԲԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՁԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՄԻՇՅԱՆ, ԱՆԺԵԼԱ ՂԱԼԱՄԴԱՐՅԱՆ

Ենթաէթնիկ նույնականացումները թեև իրավիճակային բնույթ ունեն[1], սակայն շատ կարևոր են հիմնական էթնիկ խմբի ինքնության վերարտադրության տեսանկյունից[2]: Էթնիկ ընդհանրությունների ըմբռնման համատեքստում հատկապես կարևորվում են ներէթնիկ հարաբերություններում միջխմբային տարբերակումների ուսումնասիրությունները: Միջխմբային տարբերակման խնդիրն առավել արդիական է դառնում հատկապես սոցիալ-տարածական երկարաժամկետ հաղորդակցությունների ընթացքում: Հաղորդակցման նմանօրինակ խնդիրներ դիտարկելի են Հայաստանի Հանրապետությունում առավել հաճախակի գտնվող խմբերի պարագայում, ինչպիսիք, օրինակ, ջավախահայերն են:

Սույն հոդվածը փորձ է ներկայացնելու ջավախահայերի և հայաստանաբնակ հայերի հաղորդակցական և/կամ միջխմբային սահմանների ձևավորման մշակութային և գաղափարական խնդիրները՝ թիրախավորելով ՀՀ-ում ոչ մշտական, սակայն երկարաժամկետ գտնվող ուսանող ջավախահայ երիտասարդներին: Այս խմբին անդրադարձը հատկապես կարևոր է այն առումով, որ սփյուռքահայ այլ խմբերի երիտասարդների համեմատ շատերն են հայալեզու կրթություն ստանալու նպատակով այցելում ՀՀ[3], և առանձնանում են իրենց ենթաէթնիկ, ներհամայնքային տարբերակման մեխանիզմներով:

Ընդհանուր առմամբ, միջխմբային սոցիալական սահմանների ուսումնասիրությունները միտված են բացահայտելու սոցիալական և համայնքային, էթնիկ և ազգային ինքնության հիմնահարցերը[4], դասակարգային, ռասայական, էթնիկ, գենդերային պատկանելությամբ պայ-

---

[1] Տե՛ս **Eriksen T. H**., Ethnicity and Nationalism Anthropological Perspectives, Pluto Press, 2010, էջ 145:

[2] Տե՛ս **John R. Petrocik**, Ethnicity and National Identity: A Comparison of Three Perspectives, Paper Presented at the conference Re-Thinking Democracy in the New Millenium, Houston, Texas, February 16-19, 2000, https://uh.edu/democracy/sidaniust.pdf (դիտում՝ 19.11. 2019), էջ 25:

[3] Տվյալները ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքից, http://edu.am/index.php/am/documents/index/157 (դիտում՝ 19.11.2019):

[4] Տե՛ս **Tajfel H., Turner J.C.,** The Social Identity Theory of Intergroup Behaviour, Nelson-Hall Chicago, 1985; **Anderson E.,** Code of the Street. Decency, Violence, and the Moral Life of the Inner City, WW Norton & Company, New York, 1999:

մանավորված անհավասարությունները[5], կամ զատելու մասնագիտական և աշխատանքային խմբերի միջև սահմանները[6]:

Միջխմբային սահմանազատումը կառուցվում է «սոցիալական վստահություն» և «սոցիալական հեռավորություն» հասկացությունների հայեցակարգային կապի վրա. սոցիալական հեռավորությունը պայմանավորված է միջխմբային վստահության և/կամ անվստահության մակարդակով՝ որպես խմբի անդամների ընկալումների[7] և սոցիալական տարածության մեջ առկա սպառնալիքների[8] վերարտադրության հիմք: Սոցիալական վստահությունը այլ խմբի անդամների նկատմամբ անհատական ռազմավարությունները և գործողությունները պայմանավորող գործոն է[9], որն իր հերթին պայմանավորում է մի խմբի անդամների գործողությունները մյուս խմբի անդամների հետ շփման գործընթացում: Յուրաքանչյուր անհատական ռազմավարություն, միանալով իր խմբի մյուս անդամների գործողություններին, ստեղծում է այսպես ասած «խմբային ռազմավարություն», քանի նույն ենթաէթնիկ խմբին պատկանող մարդիկ հակված են գործելու նույն կերպ նմանատիպ իրավիճակներում[10]՝ ընդգծելով միջխմբային սահմանները: Միջխմբային սահմաններից անհատական կամ խմբային ռազմավարություն և անհատական կամ խմբային ռազմավարությունից խմբային սահմաններ անցումը խմբերի անդամների առօրյայից դուրս չէ, այլ տեղի ունի այդ խմբերի անդամների կենսափորձի շրջանակներում:

Այդ տեսանկյունից սոցիալական և ֆիզիկական տարածության մեջ առկա խմբային փոխհարաբերությունները ուսումնասիրելու համար հետազոտության առարկա է դառնում անհատական կամ խմբային կենսափորձը: Վերջինս փոփոխական գործընթաց է, որը դիտարկելի է մարդկանց մտածողության և անձնական, սոցիալական և նյութական միջավայրի հետ շարունակական փոխազդեցություններում[11]:

---

[5] Տե՛ս **Bourdieu P., Passeron J. C.,** Reproduction n Education, Society and Culture, Sage Publications, London, 1972; **Barth F.**, Ethnic Groups and Boundaries: The Social Organization of Culture Difference, Waveland Press, Boston 1969; **Reskin** and **Hartmann**, Women's Work, Men's Work: Sex Segregation on the Job, National Academies Press, 1986; **Kay F., Hagan J.,** Cultivating clients in the competition for partnership: gender and the organizational restructuring of law firms in the 1990s, HeinOnline, 1999:

[6] Տե՛ս **Sarfatti-Larson M**. The Rise of Professionalism, Berkeley, Univ. Calif. Press, 1979; **Gieryn T. F.**, Cultural Boundaries of Science: Credibility on the Line, Univ. Chicago Press, 1999:

[7] Տե՛ս **Петр Штомпка**, Доверия основа общества, М., Логос, 2012, էջ 81:

[8] Տե՛ս **Eriksen T. H.**, Ethnicity and Nationalism Anthropological Perspectives, Pluto Press, 2010, էջ 80:

[9] Տե՛ս **Петр Штомпка**, նշվ. աշխ., էջ 68:

[10] Տե՛ս **Cox T. H., Lobel S. A., Mcleod P. L.**, Effects of Ethnic Group Cultural Differences On Cooperative And Competitive Behavior On A Group Task, Academy of management journal, 1991, Vol. 34, № 4, էջ 827:

[11] Տե՛ս **Clandinin D. J., Rosiek J.**, Mapping a Landscape of Narrative Inquiry, Borderland Spaces and Tensions, in Handbook of Narrative Inquiry. Mapping a Methodology, Thousand Oaks, SAGE Publications, 2007, էջ 39:

Հիմնվելով վերոնշյալ տեսական մոտեցումների վրա՝ ՀՀ-ում ուսանող ջավախահայ երիտասարդների միջխմբային սահմանազատումների մեխանիզմները ուսումնասիրելու նպատակով իրականացվել է խառը մեթոդներով հետազոտություն: Նախ, հետախուզական նպատակով կիրառվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդը՝ վիճակագրական հստակ տվյալների բացակայության պայմաններում իրականացնելով քվոտային ընտրանք՝ համայնական տարբեր ցանցերի ակտիվացմամբ[12]: Ըստ հայաստանաբնակներից սոցիալական հեռավորության չափի՝ դուրս են բերվել ջավախահայ երիտասարդների խմբեր: Հետազոտության երկրորդ քայլում օգտագործվել է նարատիվ հարցազրույցի մեթոդը[13]՝ որպես կենսափորձը հասկանալու հիմնական եղանակ[14], իսկ հետազոտության արդյունքների վերլուծության համար կիրառվել է նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը:

Սեմիոտիկները պնդում են, որ առանձին, բաժանված նշանները կամ արտահայտությունները կարող են փոխանցել ընդհանուր նշանակություններ, որովհետև դրանք ընկած են հիմնարար արժեքների ընդհանուր շարքի վրա: Դա ենթադրում է, որ արժեքը կարող է բացատրվել միայն իր տրամաբանական հակադրությունների հետ հարաբերություններում[15]: Նարատիվ կամ գրեյմասյան սեմիոտիկան մեկ այլ տեսակի մոդել է, որը վերաբերում է նարատիվին (պատումին) կամ նարատիվների խմբին՝ որպես նշանային համակարգի: Ա. Գրեյմասի մեթոդաբանությունը հիմնված է հաղորդակցության սեմիոտիկ հասկացման վրա[16]: Դրա նպատակն է բացահայտել, թե ինչպես են նարատիվ բաղադրիչները համախմբվում՝ տեքստի միջոցով նշանակություններ փոխանցելու համար:

Սույն մեթոդաբանությամբ հնարավոր եղավ դուրս բերել միջխմբային սահմանների ձևավորման և վերարտադրության գաղափարախոսական հիմքերը՝ «սոցիալական հեռավորություն» և «սոցիալական վստահություն» հասկացությունների հայեցակարգային կապի վրա կառուցված սեմիոտիկ քառակուսու կիրառմամբ (տե՛ս գծագիր 1):

---

[12] Հարցումներն իրականացվել են ՀՀ-ում ուսանող ջավախահայ 88 երիտասարդի շրջանում (ընտրանքի վստահելիության միջակայքը՝ 10%, վստահելիության հավանականությունը՝ 95.0%):

[13] Քանակական հետազոտության արդյունքների հիման վրա առանձնացված յուրաքանչյուր խմբից ընտրվել է 2-ական մասնակից, ընդհանուր առմամբ՝ ջավախահայ 8 երիտասարդ, համապատասխանաբար կառուցվել է 8 ջավախեցու կենսափորձ պարունակող 8 պատում:

[14] Տե՛ս **Clandinin D. J., Rosiek J.**, էջ 42:

[15] Տե՛ս նույն տեղը:

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 173:

Գծագիր 1

Միջխմբային արտաքին և ներքին սահմանները պատկերող սեմիոտիկ քառակուսի



Հետազոտության հիմնական արդյունքները

Սոցիալական հեռավորության չափման համար օգտագործվել է Էմ. Բոգարդուսի սանդղակը[17], ինչպես նաև սեմիոտիկ հակադիր զույգերի գնահատման տեխնիկան՝ ուղղված ավտո- և հետերոկարծրատիպերի բացահայտմանը: Առավել նկատելի բացահայտումներից է այն, որ ջավախահայ իգական սեռի ներկայացուցիչների պարագայում առավել հավանական է, որ նրանք կամուսնանան հայաստանաբնակ հայի հետ, քան արական սեռի ներկայացուցիչների դեպքում. ընդ որում, որքան շատ են բնակվում ՀՀ-ում, այնքան հայաստանաբնակ հայի հետ ամուսնանալու հավանականությունը մեծանում է: Գծապատկեր 2-ում երևում է, որ հայաստանաբնակ հայի հետ ամուսնանալու հավանականությունը տարբեր է՝ կախված սեռից և ՀՀ-ում բնակվելու ժամանակահատվածից: Մինչև 2 տարի ՀՀ-ում բնակվող արական սեռի ներկայացուցիչների 95.2 %-ը պատասխանել է, որ չի ամուսնանա հայաստանաբնակ հայի հետ: Մյուս կողմից, ՀՀ-ում մինչև 2 տարի բնակվող իգական սեռի ներկայացուցիչների 82.6 %-ն է նշել, որ չի ամուսնանա հայաստանաբնակ հայի հետ: Թեև ՀՀ-ում 2 տարուց ավելի բնակվող արական սեռի ներկայացուցիչների ավելի քիչ տոկոսն է նշել, որ չի ամուսնանա հայաստանաբնակ հայի հետ, այնուամենայնիվ այդ թիվը, միևնույնն է, բավականին մեծ է՝ 93.8 %. դրան հակառակ՝ ՀՀ-ում 2

[17] Տե՛ս **Bogardus E.,** Measuring Social Distnaces, Journal of Applied Sociology, 1925, էջ 301:

տարուց ավելի բնակվող իգական սեռի ներկայացուցիչների պարագայում կարծիքները կիսվում են:

Գծապատկեր 2

Հայաստանաբնակ հային կընդունեի որպես ամուսին



Մնացած փոփոխականների նույն տրամաբանությամբ վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ ջավախահայ արական սեռի հարցվածները ավելի մեծ սոցիալական հեռավորություն են պահպանում հայաստանաբնակ հայերի հետ հարաբերություններում, քան իգական սեռի ներկայացուցիչները (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանաբնակ հային ...	Սեռ	Այո	Ոչ
1. Կընդունեի որպես ամուսին/կին	Իգ.	35.3%	64.7%
	Ար.	5.4%	94.6%
2. Կընդունեի որպես ընկեր	Իգ.	72.5%	24.3%
	Ար.	27.5%	75.7%
3. Կընդունեի որպես հարևան	Իգ.	78.4%	21.6%
	Ար.	62.2%	37.8%
4. Կընդունեի որպես գործընկեր	Իգ.	39.2%	60.8%
	Ար.	18.9%	81.1%
5. Կցանկանայի, որ ապրեր իմ երկրում	Իգ.	59.9%	43.1%
	Ար.	32.4%	67.6%
6. Իմ երկրում կցանկանայի տեսնել միայն որպես զբոսաշրջիկ	Իգ.	43.1%	56.9%
	Ար.	59.5 %	40.5%

Սեռից կախված տարբերությունները տեսանելի են նաև հակադիր սեմիոտիկ հատկանիշների գնահատման պարագայում՝ վեր հանելով հայաստանաբնակ հայերի վերաբերյալ հետերոկարծրատիպերը (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հատկանիշներից յուրաքանչյուրին տրված գնահատականների միջինն ըստ սեռի

	Արական	Իգական
1. Անխելք-Խելացի	-0,68	1,06
2. Դավաճան-Հավատարիմ	1	2,12
3. Անհյուրընկալ-Հյուրընկալ	-0,78	-0,22
4. Ոչ հայրենասեր-Հայրենասեր	2,14	2,53
5. Անհանդուրժող-Հանդուրժող	-1	1,82
6. Չար-Բարի	-0,95	1,57
7. Տգեղ-Գեղեցիկ	1,76	1,98
8. Անվստահելի-Վստահելի	-0,5	0,47
9. Ժամանակակից-Ավանդապահ	-0,7	-0,25

Քանակական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական հեռավորության ձևերը տարբեր են արական և իգական սեռի ներկայացուցիչների դեպքում, ընդ որում՝ կարևոր է այն, թե որքան ժամանակ են նրանք բնակվում ՀՀ-ում: Այդ փոփոխականներից կախված՝ տարբերությունների առանձնացումը թույլ տվեց հանգել հետևյալ եզրակացություններին.

✓ 2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանող իգական սեռի ներկայացուցիչներն ավելի թույլ սոցիալական հեռավորություն ունեն հայաստանաբնակ հայերից, քան մինչև 2 տարի ՀՀ-ում սովորողները,

✓ մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող արական սեռի ներկայացուցիչներն ավելի թույլ սոցիալական հեռավորություն ունեն հայաստանաբնակ հայերից, քան 2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանողները:

Սեռի, ուսանելու տևողության և սոցիալական հեռավորության միջև բացահայտված վիճակագրական կապերը ջավախահայ երիտասարդների չորս տարբեր խմբեր առանձնացնելու հիմք են դարձել (տե՛ս աղյուսակ 3), որի վրա էլ կառուցվում է որակական հարցազրույցների տիպական ընտրանքը:

Աղյուսակ 3

Սեռ	**ՀՀ-ում ուսանելու ժամանակահատվածը**
Իգական	Մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող
	2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանող
Արական	Մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող
	2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանող

Որակական հետազոտության տվյալների վերլուծության ընթացքում հաշվի է առնվել այն, թե հայաստանաբնակ հայերին վերաբերող

ինչպիսի ասոցիատիվ և դիսոցիատիվ կապեր կան ջավախահայ երիտասարդների կենսափորձում, մյուս կողմից այդ կապերը դիտարկվել են մինչև ՀՀ գալու, ՀՀ-ում հարմարման և ինտեգրման փուլերում, և հաշվի է առնվել նաև, թե ջավախահայ երիտասարդների միջխմբային սահմանների ընդգծումը ինչպես է փոխվում կոգնիտիվ և պրագմատիկ հարաբերություններում: Վերլուծությունը կատարվել է հետազոտության քանակական տվյալների հիման վրա առանձնացված խմբերի համար առանձին-առանձին:

Ընդհանրացնելով նարատիվ սեմիոտիկ վերլուծության արդյունքները՝ կարող ենք առանձնացնել ՀՀ-ում ուսանող ջավախահայերի միջխմբային սահմանների զատման հետևյալ ձևերը:

Առաջին խմբի (մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող իգական սեռի ջավախահայերը) դեպքում մինչև ՀՀ գալը կոգնիտիվ մակարդակում բացասական հետերոկարծրատիպերն են, որոնք ձևավորվել են խմբային փորձով՝ պայմանավորված հայաստանաբնակ հայի «խաբեբա», «կաշառակեր» լինելու կարծրատիպերով: Մյուսը ընկալվող սպառնալիքները/ռիսկերն են, որոնք կապված են ենթաէթնիկ ինքնությամբ պայմանավորված տարբերակման հետ: Այդ ամենը առաջացնում է հավատի պակաս, հետևաբար՝ սոցիալական վստահության պակաս կոնգիտիվ մակարդակում: Ֆիզիկական հեռավորությունը հաղթահարելուց հետո ևս արտաքին ուժեղ սահմաններն են ընդգծվում: Դա պայմանավորված է մի կողմից կոգնիտիվ մակարդակում ընկալվող ռիսկերից, վախերից, զգուշավորությունից, լեզվական խոչընդոտներից, ակնկալվող հույսերը չարդարանալու պատճառով առաջացած հուսահատությունից, մյուս կողմից՝ հարմարման փուլում օգնող գործոնի դերում հանդես եկող ջավախեցիներից ու մարզաբնակ հայաստանցիներից, որովհետև դա ընդգծում է ուժեղ ներխմբային կապվածությունը՝ դժվարացնելով ինտեգրումը հայաստանցիների խմբում: Չնայած օգնող գործոն լինելուն՝ մարզաբնակ հայաստանցիները չեն տեղավորվում «մենք» կերպարում, նրանք դասակարգվում են ոչ միայն «մենք»-ի և «նրանք»-ի ինքնության սկզբունքով, այլ նաև գոյություն ունեցող տարբերությունների աստիճանակարգմամբ: Մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող իգական սեռի ջավախահայերը «մեզանից լիովին տարբերի» դերում ընկալում են երևանցուն, իսկ «մեզ համարյա նմանի» դերում՝ մարզաբնակ հայաստանցուն.

«… Ունեմ հարևան մի հատ, շատ մոտիկ էինք, կարևորը հայաստանցի չի, մարտունեցի ա, շատ լավն ա, եթե հայաստանցի, Երևանի աղջիկ լիներ, հաստատ էտքան մոտիկ չէինք լինի հետը, իրա՝ մարտունեցի հարևանի ու մեր մտածելակերպը իրար շատ նմանա, ինձի թվա գը, որ շատ տարբեր են Երևանի հայաստանցիներն ու մարզերի հայաստանցիները: Հիմնականում մարզերի հայերը մեզի պես կմտածեն, իրենք էլ մեզի պես չեն հավնի Երևանի հայերին» (մինչև 2 տարի ՀՀ-ում

ուսանող ջավախահայ իգական սեռի ներկայացուցիչ):

Ակներև է նաև կարգավիճակի պահպանման խնդիր այն առումով, որ այս խմբի ներկայացուցիչները պահում են սոցիալական հեռավորություն հայաստանցիներից, ինչպես իրենց խմբի մյուս անդամները, այսինքն՝ իրենց առանձնացնում են հայաստանցիներից՝ մնալով այդպես վարվող իրենց խմբի մնացած անդամների կողքին՝ պահելով իրենց դիրքը խմբի ներսում: Այդ ամենով պայմանավորված՝ նրանք ընտրում են «որքան հեռու, այնքան լավ» ռազմավարությունը:

Երկրորդ խմբի (2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանող իգական սեռի ջավախահայերի) դեպքում ևս ՀՀ տեղափոխվելու փուլում կոգնիտիվ մակարդակում ընդգծված են արտաքին ուժեղ սահմաններ: Այս դեպքում էլ պատճառը խմբային փորձի արդյունքում ձևավորված բացասական հետերոկարծրատիպերն են.

> *«…Մինչև գալս ինձ թվում էր, որ ես հեսա գնալու եմ ընդեղ, թեկուզ հենց լեզվի առումով, որ ես չեմ կարողանալու խոսամ ու ծիծաղի առարկա եմ դառնալու» (2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանող ջավախահայ իգական սեռի ներկայացուցիչ):*

Միջխմբային հեռավորության հաղթահարմանը նպաստող գործոնի դերում հայերենով կրթությունն է, բայց հաղորդակցության տեսանկյունից լեզուն խոչընդոտող գործոն է: Այս դեպքում, հաղթահարելով ֆիզիկական հեռավորությունը, հաղթահարվում է նաև սոցիալական հեռավորությունը, և արդեն ընդգծվում են միջխմբային արտաքին թույլ սահմաններ: Այս փուլում նրանք մշակութային ու միջավայրային բարդությունների չեն առնչվում, և ակնկալվող բացասական ռիսկերն ու սպառնալիքները փոխվում են ակնկալվող դրական սպասումներով, ինչը պայմանավորված է պրագմատիկ մակարդակում լեզվի՝ որպես օգնողի գործոնով: Մյուս կողմից, հարմարման փուլում օգնող գործոն են ոչ թե հայրենակիցները, այլ անծանոթ հայաստանցիները. սա առաջացնում է սոցիալական վստահություն և թուլացնում է ներխմբային ուժեղ կապվածությունը՝ փոքրացնելով հայաստանցիներից ունեցած սոցիալական հեռավորությունը: Իրավիճակային գործոնների ազդեցությամբ նրանք ընտրում են «համագործակցելու» ռազմավարությունը:

Երրորդ և չորրորդ խմբերի (մինչև 2 տարի և 2 տարուց ավելի ՀՀ-ում ուսանող արական սեռի ջավախահայերը) դեպքում հարաբերությունները միանման տրամաբանությամբ են զարգանում: Նախքան ՀՀ տեղափոխվելը կոգնիտիվ մակարդակում ընդգծվում են արտաքին ուժեղ սահմաններ՝ պայմանավորված խմբային փորձով ձևավորված հայաստանցու «խաբեբա» և «կռվարար» կերպարով.

> *«…Դե ասում էին, որ իրանք խաբեբա են ու կռվարար: Պատմում էին, որ անմեղ տեղը կարողա ընգնես կռիվների մեջ» (մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող ջավախահայ արական սեռի ներկայացուցիչ):*

Ի տարբերություն իգական սեռի ներկայացուցիչների՝ արական սեռի ներկայացուցիչների սոցիալական հաղորդակցման հիմնական շրջանակը հայրենակիցներն են: Հարմարման փուլում հեղինակավոր ջավախցի հայրենակիցները ինտեգրման փուլում դառնում են խոչընդոտ հայաստանցիների հետ շփվելիս, որովհետև շփումը պահպանվում է մեծապես խմբային սահմանների ներսում՝ մեծացնելով միջխմբային հեռավորությունը: Այս փուլում հարաբերությունների բացասական տոնը պայմանավորված է նախորդ փուլում ունեցած պատկերացումներով, սպառնալիքներով և կարգավիճակի պահպանման խնդրով. այս խմբերի ներկայացուցիչներն ընտրում են «հեռու մնալու» ռազմավարությունը:

Հարաբերությունների բացասական տոնը պրագմատիկ մակարդակում շարունակում է պահպանվել նաև անընդհատական կոնֆլիկտների պատճառով՝ սրելով ենթաէթնիկ ինքնությամբ պայմանավորված տարբերակումները և ջավախահայ երիտասարդների ներքին թույլ սահմանները նաև ՀՀ-ում: Ընդ որում, ի տարբերություն ջավախահայ երիտասարդների առաջին խմբի ներկայացուցիչների, այս դեպքում մարզաբնակ հայաստանցին գործոն չէ: Այստեղ կենտրոնական է խմբային կարգավիճակի պահպանման խնդիրը.

«… եսիմ, իրանց բարձր են զգում, բայց մեծը մենք ենք էլի վաբշե» (մինչև 2 տարի ՀՀ-ում ուսանող ջավախահայ արական սեռի ներկայացուցիչ):

Ամփոփելով կարելի է պնդել, որ հայաստանաբնակ հայերի հետ հարաբերությունների համատեքստում ՀՀ-ում ուսանող ջավախահայ երիտասարդների միջխմբային սահմանազատումները պայմանավորված են ներխմբային փոխկապվածությամբ և մշակութային տարբերություններով: Ջավախահայ երիտասարդների միջխմբային սահմանների ընդգծումը առավել պարզ ցույց է տրված գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3

Ջավախահայ երիտասարդների միջխմբային սահմանների սխեմա



Բանալի բառեր - *միջխմբային սահմաններ, սոցիալական հեռավորություն, սոցիալական վստահություն, կենսափորձ, նարատիվ (պատում), սեմիոտիկա*

АРУТЮН ВЕРМИШЯН, АНЖЕЛА ГАЛАМДАРЯН – ***Механизмы межгрупповых разграничений молодых армян Джавахка, обучающихся в Армении.*** – В литературе не раз описывались механизмы идентификации и дифференциации армян диаспоры на родине и за её пределами, способствующие возникновению межгрупповых границ. В статье выявляется межгрупповое разграничение студентов из Джавахка, обучающихся в Армении, в отношениях с местными соотечественниками. Для сбора информации использовались методы стандартизированного и глубинного интервью. В качестве аналитической основы использована методология нарративной семиотики. В ходе исследования были определены четыре группы молодёжи из Джавахка. В статье утверждается, что в отношениях с местными соотечественниками межгрупповая демаркация студентов из Джавахка обусловлена межгрупповой взаимосвязью и культурными различиями.

Ключевые слова: *межгрупповые границы, социальная дистанция, социальное доверие, жизненный опыт, нарратив, семиотика*

HARUTYUN VERMISHYAN, ANZHELA GHALAMDARYAN – ***Mechanisms of Intergroup Demarcations of Armenian Youth from Javakheti Studying in Armenia.*** – Within the framework of formation and operation of Armenian Diaspora, the identification and differentiation mechanisms of Armenians in and outside of Armenia have been historically emphasized thus contributing to the emergence of intergroup boundaries. The issue of intergroup differentiation is becoming more urgent especially in regards to groups such as Armenians from Javakheti that come to Armenia for a long-term purpose. This article aims at revealing the inter-group demarcations of Javakheti Armenian youth studying in Armenia in their relationships with Armenians living in Armenia. A theoretical basis has been composed by revealing the conceptual links between social distance and social trust. To collect the necessary information, we used the methods of standardized interviews and in-depth narrative interviews. Narrative semiotics methodology was adopted as an analytical basis. The study identified four groups of Javakheti Armenian youth. We argue that in the context of relationships with Armenians living in Armenia the intergroup demarcation of Javakheti Armenian students is conditioned by intergroup interconnection and cultural differences.

Key words: *intergroup boundaries, social distance, social trust, life experience, narrative, semiotics*

Ներկայացվել է՝ 25.09.2019
Գրախոսվել է՝ 16.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019